

491.99-8

9-95

3485

1910

2010

?

2002

491-99-8  
9-95

ԿՈՎԿԱՍԽԵՆ ԳՐԱԴԱՐԱՆ Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

# Ա Ռ Ա Կ Օ Տ



ՆԱԽԱԿՐԹԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Պատկերների օժանդակութեամբ

№ I-ին

Դաստիարակչութիների եւ նույ 4-7 տարեկան սանիկների  
համար:

5 պատկերներով

Դ Ա Խ Ք Ա Ն Ա Յ Ի Բ Բ Ե Ն Ս Ո Վ Ո Ր Ե Լ Հ

Կազմեց Զ. Գ Ր Ի Գ Ո Ր Ե Ս Ա Յ Ց

Տ Փ Խ Ի Ս

Հայագատիալ Ժամանակակից Եղիպատճենին և կայսեր Հ. 17.  
1910 թ.

491.542-82 4  
9-95

**ՀՐԱՏԱՐ. ԿՈՎԿԵՍԵԱՆ ԳԲԸՆԱՅ. Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ**

7104 498  
58-911

# U. S. U. H. O. S.



ՆԱԽԱԿՐԹԱԿԱՆ ԴԱՍԸ ԱՎԵՆԱ ԽԱՆՈՒՄ ԱՎԵՆԱ  
ԱՆԿԵՐՆԵՐԻ ՕԺԱՆՊԱԿՈՒԹՅՈՒՆ ԿՅԱՆԻԿՅԱՆԻ ԱՎԵՆԱ  
№ I-ին  
Ների եւ նոցա 4—7 տարեկան սանիկների  
համար:

Nº I-Hu

Դաստիարակչութիների եւ նոցա 4—7 տարեկան սանիկների  
համար:

## ՆԱԽՔԱՆ ԱՅԻԲ-ԲԵՆ ՍՈՎՈՐԵԼԸ

Կազմել Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑ


A decorative horizontal border element consisting of a repeating pattern of small circles and stylized floral or geometric motifs.

Տ Փ Խ Ի Ս  
Արագատիպ «Էսպերանտո» Ելեկտրիստինսկայա № 17.  
1910 թ.

11813

891  
IP-86

ՅՈՒԹՈՒՄ



## ԱՌԱԻՕՏ

Աքաղաղը—առաւօտը—արել նոր ծագած ժամանակ—  
ամենից շուտ զարթնելով—կանչում է՝  
«Ծուղրու-դու, ծուղրու-դու»։

Մարդիկն էլ հէնց որ զարթնում են, իսկոյն բարձր  
ձայնով կանչում են՝

«Լուսացաւ, լուսացաւ,  
Լուսն է բարին,  
Ծիտն է ծառին,  
Հաւն է թառին.  
Ծոյլ մարդու քունն է տարել,  
Աշխատաւոր վեր կաց բանիդ»։

I. ԱՔԱՂԱՋԻ ՄԱՍԻՆ

Աքաղաղը հարցնում է՝

«Ծուղրու-դու, ծուղրու-դու:

Այն ով է, որ առաւօտը արեի ծագելը—ամենից շուտ  
նա է իմանում:

Այն ով է, որ առաւօտը արել ծագելիս—ամենից  
շուտ նա է զարթնում:

Այն ով է, որ աշխարհին աչքալուսէք տւողը—առաւ-  
օտը նա է լինում:

Ծուղրու-դու, ծուղրու-դու:

Այդ բոլորը ես եմ, ես՝ աքաղաղս, աքլարս, աքլորս,  
—և ինչ անուն էլ գուղէք առւեցէք ինձ: Ես եմ որ աշ-  
խարհին զարթացնում եմ, քնած տեղից վեր կենան, աշ-  
խատանքի կպչեն: Դրա համար կանչում եմ՝

Ծուղրու-դու, ծուղրու-դու:

Այ հաւեր, այ հաւեր,  
Քնած տեղից զարթնեցէք  
Թառից իջէք,  
Քջուջ արէք,  
Որ կուտ—ճարէք:

Ծուղրու-դու, ծուղրու-դու:

Այ մարդիկ, այ մարդիկ,  
Քնից շուտով զարթնեցէք,  
Գործի հետ եղէք,  
Որ հայ ճարէք:

Ծուղրու-դու, ծուղրու-դու:

Այ ծաեր, թոչնիկներ, դուք էլ թափէ-թափ արէք,  
գնացէք, եկէք, կեր ճարէք:

Ծուղրու-դու, ծուղրու-դու:

Մութ խաւարը անցկացաւ,

Բարի լոյսը մեզ հասաւ,

Միմիանց երես մենք տեսանք,

Ուրախացանք, հրճուեցանք:

«Ծուղրու-դու, ծուղրու-դու, ծուղրու-  
դու, ծուղրու-դու»:

Ամեն օր, այդ բարի գործի պաշտօնը ես եմ կատա-  
րում, այդ պատճառով էլ ամբողջ աշխարհը ինձ ճանա-  
չում է:

Եթէ մի որ և իցէ տանը մի քանի հաւ լինի, այն  
տեղ անպատճառ ես էլ պէտք է լինեմ, որովհետեւ ես հա-  
ւերի իշխանն եմ, թագաւորն եմ: Հաւերը իմ «ստրուկ-  
ներն են, իմ կու-հպատակները են. Ես ինչպէս հրամայեմ,  
հաւերն էլ ինձ են լսում, ինձ են հպատակում,

Ծուղրու-դու, ծուղրու-դու:

Շատ անգամ ես, որ կուտ եմ ճարում՝ կըռ, կըռ,  
կըռ եմ կանչում, հաւերը իսկոյն վազում են մօտս և ես  
նրանց եմ տալիս իմ ճարած կուտը:

Եթէ մի բագում հաւեր լինեն և ես էլ նրանց մէջը  
լինեմ. այդ ժամանակը մի երեխայի հարցըէք—թէ այդ  
քան հաւերի մէջ, աքաղաղը ո՞ն է: Երեխան իսկոյն կը-  
պատասխանէ:

Այ, նա որ ամեն հաւից երկու անգամ մեծն է, եր-  
կայն ոտներով, երկայն վզով, նախշուն և փայլուն փետուր-  
ներով, բարձրացրած և յետ թեքուած պոչով: Ապա, իմ սան-  
դրանման և մսալի կարմիր կատարս, 2 հատ նոյնպէս մսալի  
կարմիր միրուքու: Ապա իմ ոտներիս վերայ, ոտներիս մատ-  
ներիցը փոքր ինչ վերև—չէք նկատել իմ սուր-սուր խթան-

ները։ Այդ խթաններն էլ նորա համար է, որ երբ մի օտար աքաղաղ համարձակումի գալ իմ բագը, ինձ հաւատարիմ հաւերիս խլելու, այն ժամանակը մեր երկուսիս մէջ սարսափելի պատերազմ կը լինի և մենք այդ սուր խթաններով միմեանց վերքեր ենք տալիս։

### «Ծուղրու-ղու, ծուղրու-ղու»:

Այսպէս ամբողջ աշխարհը աքաղաղներիս ճանաչում է։ Գիւղացի կանայք մէզ շատ են յարգում, որովհետեւ առաջին մեր կանչին, նոքա են առաջինը, որ արթնանում են։ Նոքա մեզ օրինում են, որ շատ կանուխ ենք կանչում և նրանց արթնացնում, որով նոքա ժամանակ են, զտնում տան ընթացիկ բազմազան գործերը լրիւ կատարել. իսկ եթէ ուշ զարթնէին, չէին կարող շատ բան կատարել։

Քաղաքի կանանց մէջ էլ երբեմ գտնուում են որ մեզ յարգում են։ Օրինակ՝ քաղաքացի մի կին կար, անունը Շուշան։ Մեզ նման համարձակ կանչելու համար, ի պատիւ մեր, նրան «Արլար-Շուշան» անունը դրին։ Միթէ չէք լսել. հարցը մինչ Մողնու թաղումը, մինչև անգամ նրա բնակած տեղը ցոյց կը տան։

### Ծուղրու-ղու, ծուղրու-ղու»:

Բացի դրանից, ծոյլ մարդիկ, որոնք շատ քնել են սիրում, մեզ—աքաղաղներիս վերայ դուրեկան երգեր են հարել։

Դու ինձ ասա, աքաղաղ,

Ոսկէ կատարիդ մատաղ,

Կարմիր միրուքիդ մատաղ,

Ի՞նչի ես շուտ արթնանում,

Քաղցր քունս խանգարում,

### Ծուղրու-ղու, ծուղրու-ղու»:

Աշխարհումս միշտ այդպէս է, փոխանակ շնորհակալ

լինելու, որ իւր ժամանակին, առաւտօնենց կանուխ իմաց են տալիս, որ արթնանան, աշխատանքի գնան, հացի փող, վաստղկէն՝ թէ իրանց համար, թէ իրանց ընտանիքի-երեխերանց համար. — դեռ էլի մեզանից դժգոհ էլ են, թէ բնչու, մենք նրանց քաղցր քունը խանգարում ենք։

### Ծուղրու-ղու, ծուղրու-ղու»:

#### ՊԱՏԿԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս այսպէս. մենք տեսանք, որ մինչև հիմայ աքաղաղն էր խօսում. այժմ տեսնենք, վերել նկարած պատկերին, ինչ է ցոյց տալիս և մեզ ինչ է բացատրում և ուղարցնում։

Մանուկի դաստիարակչունին դիմում է մանուկներին դաստանը և ասում բացէք գրքերդ և նայեցէք նկարած պատկերին, թէ ինչ բան է նկարածը։

Փատասխան։ Ծառ է նկարած մէջ տեղը։

Դաստիարակչունի։ Լաւ, շատ լաւ, իրաւ, ծառ է նկարած։

Ապա. ծառի վերայ մի բան նկատում էք, թէ ոչ։ Պատ. — Այն, այն, — ծառի վերայ երեսում է, որ ծառը են նստած։

Դաստ. — Լաւ, շատ լաւ, իրաւ ծառի վերայ ծառը են նստածած։

Դարձեալ պատկերի վերայ էլ ինչ կայ նկարած։

Պատ. — Հաւեր է նկարած թառի վերայ նստածած։

Դաս. — Իրաւ է, հաւեր է նկարած որ թառի վերայ նստածած են։

Դարձեալ, ինչ կայ նկարած։

Պատ. — Երկու անկողին է նկարած. մէկի մէջ մի մարդ քաղցր քնած է, միւս անկողից արդէն մարդը վեր է կացել և շորերը հագնում է։

Դաս. — Շատ գեղեցիկ. այդպէս է:

Այդ ի՞նչ մարդիկ են:

Ազա, ոտանաւորը կրկնենք՝ լուսացաւ, լուսացաւ, լուսն  
է բարին, ծիսն է ծառին, հաւն է թափին, ծոյլ մարդու  
քունն է տարել, աշխատաւոր վեր կաց բանիդ:

Այդ մարդկանցից ո՞րն է ծոյլը, ո՞րն է աշխատաւորը:

Պատ. — Այն որ քունը տարել է, նա ծոյլ մարդն է.  
այն որ անկողնից վեր է կացել և շորերը հագնում է որ  
գնայ գործի, նա է աշխատաւոր մարդը:

Դաս. — Այդ երբ են քնած եղել թէ ծտերը ծառի վերայ,  
թէ հաւերը թառի վերայ և թէ մարդիկ անկողնում:

Պատ. — Գիշերն են քնած եղել՝ ծտերը ծառի վերայ,  
հաւերը թառի վերայ և մարդիկ էլ անկողնում:

Դաս. — Իսկ մենք գիշերը ի՞նչ ենք անելիս եղել:

Պատ. — Մենք էլ գիշերը քնած ենք եղել:

Դաս. — Ուրեմն բոլոր կենդանի արարածները — գիշեր-  
ները քնում են, իսկ ցերեկը արթուն են մնում:

Պատ. — Կենդանի արարածները գիշերը քնում են. ցե-  
րեկը արթուն մնում:

Դաս. — Թէ մարդիկ, թէ ծտերը, թէ հաւերը երբ են  
զարթնում:

Պատ. — Առաւօտը, երբ արել ծագում է և լոյսը երե-  
ւում, այն ժամանակն էլ արթնանում են՝ թէ մարդիկ,  
թէ ծտերը և թէ հաւերը:

Դաս. — Իսկ աքաղաղը երբ է կանչում «ծուղրուղու,  
ծուղրուղու»:

Պատ. — Աքաղաղը հէնց առաւօտը այդ արել ծագելիս  
է կանչում «ծուղրուղու, ծուղրուղու»:

Դաս. — Հաւերը թառից որ իջնում են, ի՞նչ են շինում:

Պատ. — Հաւերը թառից որ իջնում են, իսկոյն սկսում  
են մանգալ, քջուջ անել, որ կուտ ճարեն, կուտ ուտեն:

Դաս. — Մարդիկ ի՞նչ են անում, երբ զարթնում են:

Պատ. — Մարդիկ էլ որ զարթնում են, իսկոյն գնում են  
իրանց գործի, իրանց աշխատանքի, որ հացի դրամ աշխա-  
տեն թէ իրանց համար և թէ իրանց կանանց և երեխա-  
ների համար:

Դաս. — Ուրեմն, գիշերն ի՞նչու համար է, ցերեկը ի՞ն-  
չու համար:

Պատ. — Գիշերը քնելու համար է, ցերեկը արթուն լի-  
նելու և աշխատելու:

Դաս. — Մթանը քնել, ցերեկը արթուն լինել:

Դաս. — Դարձեալ պատկերի վերայ մի բան տեսնում էք,  
թէ ոչ:

Պատ. — Այս, այս. աքաղաղն է նկարած:

Դաս. — Դա այն աքաղաղն է, որ առաւօտը, արել նոր  
ծագելիս, ծուղրուղու է կանչում և աչքալումէք տալիս  
աշխարհին որ լուսացաւ:

Դաս. — Մին էլ լաւ նայեցէք, դարձեալ մի բան տես-  
նում էք, թէ ոչ:

Պատ. — Այս, տեսնում ենք, բայց սա ի՞նչ է:

Դաս. — Դա արեի նկարն է, որ իր ճառագայթները  
սփռում է ամեն կողմը և մեր աքաղաղն էլ է տեսնում  
և իմանում, որ լուսացաւ:

## ԾԱՌԻ ՄԱՍԻՆ

Դաս. — Այս ի՞նչ բանի նկար է, ցոյց տալով ծառի նը-  
կարը:

Պատ. — Այս ծառի նկար է:

Դաս. — Դուք ծառ տեսել էք:

Պատ. — Մենք շատ ծառեր ենք տեսել.

Դաս. — Ուրա՞ղ էք ծառեր տեսել:

Պատ. — Փողոցները և այգիները ծառերով լիքն են:

Դաս. — Ապա, պատղառու ծառերի անուն տուեցէք:

Պատ. — Խնձորի ծառ, տաճախ ծառ, դեղձի, ծիրանի ծառ:  
Դաս. — Եթէ դուք ուզենաք դեղձի, ան ծիրանի ծառ  
ունենալ, պիտիք ի՞նչ պէտք է անէք:  
Պատ. — Գուզենք դեղձի և ծիրանի ծառ ունենալ. բայց  
ի՞նչ պէտք է անենք:

Դաս. — Պէտք է վերցնէք դեղձի կորիզը, փափուկ գե-  
տինը փորէք այնքան, որ կորիզը մէջը տեղաւորուի և վրիցն  
էլ մի փոքր տեղ մնայ որ կորիզը հողով ծածկէք: Եւ եթէ  
աշնանը կորիզը ցանէք, վեց ամսից յետոյ դեղձի փոքրիկ  
ծառ կունենանք:

Սանիկ. — Իսկ, եթէ խնձորի ծառ ուզենանք ունենալ,  
ի՞նչ պիտի անենք:

Դաս. — Աշնանը, երբ խնձորը հասնում է, վերցրէք մի  
մի ամբողջ խնձոր և ծիրանի կորիզի նման ցանեցէք փա-  
փուկ գետնի մէջ և վրիցն էլ քիչ հողով ծածկեցէք: Խըն-  
ձորի միջում սերմեր կայ, այն սերմերից խնձորի ծառ  
կը դուրս դայ միջից վեց ամսից յետոյ — գարնանը:

Դաս. — Դուք լսեցիք այժմ, որ պտուղ ունեցող ծա-  
ռերը դուրս են գալիս կամ կորիզը ցանելով, կամ հէնց  
ամբողջ պտուղը գետնում ցանելով:

Դաս. Ինչ որ գետնից դուրս է գալիս, ի՞նչ որ գետ-  
նից ըստում է, նրան ասում են լոյս:

Սանիկ. — Դեղձի կորիզը գետնիցն է դուրս գալիս,  
ծիրանի կորիզն էլ գետնիցն է բանում:

Դասա. Ուրեմն դեղձի ծառն էլ ըսյա է կոչվում. ծի-  
րանի ծառն էլ բոյս է: Ուրեմն բոլոր ծառերն էլ բոյս են  
կոչւում,

Սան. — Խոտերը չէ որ գետնիցն են բանում:

Դաս. — Այս, բոլոր խոտերն էլ գետնիցն են բանում.  
Հետեապէս բոլոր խոտերն էլ բոյս են:

— Ուրեմն խոտերն էլ, վարդի թփերն էլ և բոլոր  
ծառերն էլ — ըսյա են կոչվում:

Դաս. — Բոլոր բոյսերը, խոտերը, թփերը և ծառերը  
գետնից են բանում, մէծանում են, ծաղիկ են տալիս,  
ծաղկի միջին պտուղն է գոյանում և ապա ծառը քանի  
գնում է, ծերանում է:

— Մի ծառը, դուք գիտէք որ շատ պտուղ է տալիս  
և ամեն մի պտուղից — մի ծառ դուրս կը գայ, սա էլ շատ  
պտուղ կը տայ,

Հետեապէս ծառերն էլ բազմանում են:

— Այժմ ձեզ մի բան հարցնեմ ինչու ծառերը չեն  
վայր ընկնում երբ սաստիկ և զօրեղ քամիք է լինում:  
Պատ. — Զանազան պատասխան.

Դասա. — Ես ձեր փոխարէն պատասխանեմ: Ինչքան որ  
տեսնումէք ծառերը գետնի երեսին բարձրանումեն և շատ  
ձիւղաւորում. այնքան էլ ծառերը գետնի մէջն են մտնում և  
այն տեղ ձիւղաւորվում: Ծառի այն մասը որը գետնի մէջն  
է գտնվում, նրան ասում են արմատ. ծառի արմատ (քոք).  
Խոկ այն մասը, որը գետնի երեսին է դուրսգալիս, նրան  
ասում են լոյս. ծառի բունը: Ծառի բնին վերայ — դուրս  
են գալիս շատ ու շատ ձիւղեր. բնի մոտիկները հաստ  
են լինում, խոկ բնից քանի հեռու են գնում, — բարականու-  
մեն: Այդ ձիւղերի վերայ դուրս են գալիս տերեներ  
(փոթոլիներ), ծաղիկներ և այդ ծաղիկներից էլ գոյանումէ  
ծառի պտուղը: Եթէ խնձորի ծառէ, ինձոր է դուրս գալիս  
նորա ծաղկից, եթէ դեղձի ծառէ, դեղձ և այն:

Ծառի արմատն էլ շատ է ձիւղաւորվում գետնի  
մէջ. բայց արմատի ձիւղերի վերայ տերեւներ և ծա-  
ղիկներ չեն դուրս գալիս, եթէ ծաղիկ չը կայ, պտուղ էլ  
չը կայ:

Խոտերը գարնանը որ գետնից բսնումեն և դուրս են  
գալիս, ծաղիկներ են տալիս, ծաղիկների մէջ խոտի սերմեր  
են գոյանում, այդ սերմերից էլի նորից — խոտ է դուրս  
գալիս: Խոտերը ամառը և ձմեռը չորանումեն. բայց սեր-

մերից նորից էլի այն տեսակ խոտեր են դուրս գալիս գարնանը. Ուրեմն խոտերը մի տարի են ապրում: Թփերը բաւականին տարիներ են ապրում. իսկ մեծ—մեծ ծառերը շատ տարիներ են ապրում: Հետեապես, բոյսը, թէ խոտ լինի, թէ թուփ լինի և թէ ծառ—սերմից և կորիզից է գոյանում. բանումէ գետնի միջից, մեծանումէ, աճում է, ծաղիկ է տալիս, որի մեջ սերմեր են գոյանում և այդ սերմերից նորից—նոր բոյս կը գոյանայ և ապա ժամանակով կը չորանայ ծառը:

### ԹՌՉՈՒՆԻ ՄԱՍԻՆ

Մենք տեսնանք, որ ծառի ճիւղերի վերայ վիշերուանից նստած են լինում թռչուններ (ծիտ, ծտեր) ուրոնք լուսադէմին զարթնումեն, ու թռչում իրանց համար կուտ ճարելու:

Ով թե ունի, նրան ասումեն թռչուն, որովհետեւ թեւերով են թռչում: Ծիտը թռչուն է, հաւը, հնդկահաւը աքաղաղը, բաղը, սաղը, աղաւնին,—դրանք բալորն էլ թռչուն են, որովհետեւ թեւեր ունին և թեւերի օդնութեամբ թռչումեն:

Մենք մարդիկս ձեռներ ունինք. իսկ թռչունները ձեռներ չունեն, այլ ձեռների փոխարեն թեւեր ունին: Թռչունների մարմինը ամբողջովին ծածկուած է փետուրով (բմբուլ):

Թռչունները ձու են ածում, թռվսու են գալիս և ձուաներից ձագուկներ հանում: Լաւ կը լինի որ դաստիարակչուհին մանրամասն պատմի իր սանիկներին հետերի թռւիս գալու և ձագուքն հանելու մասին: Սա շատ հետաքրքիր կը լինի սանիկների համար: (Այդ մասին կայ գրքումս):

Հաւերը առ հասարակ քիչ են ապրում. իսկ մեծ թռչունները շատ են ապրում:

Հաւերը ոտների վերայ 4 մատներ ունեն, որոնցից 3-ը ուղղուած են լինում դէպի առաջ, և միայն մի մատը ուղղուած է լինում դէպի ետ: Եւ երբ հաւը նստում է ձողի վերայ և կամ ծառի ճիւղկի վերայ, երեք մատը առջևից և մի մատը ետեկց ամուռ բռնում են ձողը և ծառի ճիւղկը և այդպէս գիշերը քնում և չեն վայր ընկնում:

### ԱՐԵՒԻ ՄԱՍԻՆ

Արեր առաւօտը որ ծագում է և գուրս է գալիս, բոլոր աշխարհն էլ լուսանում է և մութը կորչում:

Մարդիկ միմեանց տեսնում են, ուրախանում են, միմեանց բարեսում են, աչքալուսեք են տալիս, որ մութը, խաւարը զնաց, լուսը եկաւ և աշխարհքով փռուեց: Այդպէս, ամեն առաւօտ, արեր ծագում է, աշխարհը լուսաւորում և երեկոյեան մայր է մտնում և մեզմնից հեռանում: Սկսում է մթնանալ և եթէ զիշերը լուսնեակ չի լինում, այն ժամանակը շատ է մթնանում ու չորս կողմը իստարում է: Ուրեմն արեր իր մէջ լոյս ունի. ինքը զուրս է գալիս, լոյսն էլ հետը բերում է և սփռվում է ամեն կողմը. երեկոյեան որ մայր է մտնում, լոյսն էլ հետը գնում է և արեկի հետ անյետանում: Միւս առաւօտը, հէնց արեր ծագում է և գուրս է գալիս, լոյսն էլ հետը զուրս է գալիս, լուսանում է. երեկոյեան արեր մայր է մտնում և լոյսն էլ իր հետ տանում է:

Դուք նկատած կը լինիք, որ ամառ ժամանակը, երբ մենք արեգակումն ենք ման գալիս, շատ ենք տաքանում և շոքում, շատ էլ քրանում ենք: Իսկ, եթէ շուաքումն ենք ման գալիս, հով է լինում, այնքան չենք շոքում: Այդ նշանակում է, որ արեր իր մէջը տաքութիւն էլ ունի. այդ տաքութիւնով մեզ էլ տաքացնում է,

Աշնան վերջերում, երբ օդը սկսում է ցրտել և ձմեռ  
ժամանակ, երբ օդը արդէն ցրտացել է և երբ այդ ժա-  
մանակը արեք գուրս է գալիս, — ծեր-զառամեալ մարդիկ,  
— արևակոխ տեղ են փնտռում և արեի տակը նստում որ  
շատ ու քիչ տաքանան:


Եթէ արեք տաքութիւն չէր ունեցել և լոյսի հետ չէր  
տարածել ու սփռել ամբողջ աշխարհով, — այն ժամանա-  
կը ցրտից ոչ մի բոյս, ոչ մի խոտ, ոչ մի ծառ չէր կա-  
նանչի, չէր ծաղկի, պառող չէր տայ: Ինչ կը լինէր աշ-  
խարհի դրութիւնը: Խոտը չէր գուրս գայ: ոչխարը, եղը,  
կովը, ձին և ուրիշ շատ կենդանիք կերակուր չէին ունե-  
նալ. նրանք էլ չէին կարող ապրել: Մենք մարդիկս էլ  
ցորեն չէինք ունենալ որ ալիւր ստանայինք և հաց թը-  
խէինք: Մի խօսկով ամբողջ աշխարհում առանց արեի սա-  
ռուց կը լինէր և սառնամանիք:

Հետեապէս առաւոտը արել որ ծագում է և գուրս  
է գալիս, իր հետը բերում է և լոյս և տաքութին. երբ  
երեկոյեան արել մայր է մանում, տանում է իր հետ, համ  
լոյսը, համ տաքութիւնը:

Այդպէս ամեն օր էլ կրկնվում է:

Մենք սկզբումը տեսանք որ, երբ առաւոտը, արել  
ծագել էր և գուրս էր եկել աքաղաղը «ծուղրու—զու էր»  
կանչել. մարդկանցից աշխատաւորը զարթնել էր, շորերը  
հագնում էր, որ գնայ աշխատելու. իսկ ծոյլ մարդը դեռ  
էլի անկողնում պառկած էր մնացել:

Եթէ ծոյլը երեխայ է, նրան մայրը կը զարթացնի և  
եթէ ուսումնաբանի աշակերտ է, անպատճառ շուտ կը զար-  
թացնի, որ երեսը լուանայ, թէյ խմի և դասին չուշանայ:  
Իսկ եթէ հասակով մարդ է և զիւղացի, այնժամանակը, —  
նորա կինը երգ ասելով կը զարթացնի. ահա այս երգով:



### ԱՌԱԽՈՏԵԱՆ ԵՐԳ ՇԻՆԱԿԱՆԱՅ

Այ մարդ, այսօր շատ քընեցար նընջեցիր,  
Առաւոտեան հով ժամանակ անցուցիր,  
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,  
Զերմութիւնը ձորն ու դաշտը փըռուեցաւ:

Ընկերներդ վաղ արտերը գընացին,  
Յորեն գարին գերանդիով հընձեցին,  
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,  
Նըստան հանգչիլ կաղնիներու հովումը:

Այ մարդ՝ վեր կաց, սառը ջրով լուացվիր,  
Գօտիդ կապէ, գերանդիդ առ դաշտ հասիր

Քանի հով է՝ հունձըդ արա արտումըդ,  
Հունձըդ հընձէ, մի ծուլանար գործումդ։  
  
Հունձըդ կապէ, բարզըդ բարզէ, տուն արի,  
Հանգըստացիր, երբ քո հունձդ կատարի,  
Բեր գերանդիդ, կախէ պատին քո տանը,  
Ես իրիկուան կըպատրաստեմ սեղանը։  
  
Այ, մարդ, հերիք ինչ-որ այսօր բընեցար.  
Աչք մէկ բաց, տես թէ որչափ ուշացար,  
Մեր դըրացին վաղ անցկացաւ կամուրջէն,  
Վաղ լըռել է մեր գըզիրը ձայնել էն։

Ի՞նչ ես պառկել, ի՞նչ ես քընել, սիրեկան,  
Արեգական շոքը հասաւ մեր դըրան,  
Մի ծուլանար, ժամանակըդ խընայէ,  
Այն պիտի մեղ բոլոր ձմեռը կերակըէ։

Ուաֆայէլ Տէր Գարդիւնան Պատկանեանց

### ՀԱՒԵՐԻ ԹՌԻԽՍ ԳԱԼՅ

Հաւերը, առհասարակ, սիրում են թուխս գալ: Ի՞նչ  
կը նշանակէ թուխս գալ: Թուխս գալ կը նշանակէ մի քա-  
նի հատ ձուաներ ածել մի տեղ, այդ ձուաների վերայ  
նստել և ձագուկներ հանել: Բնութեան մէջ, ազատ տեղ  
հաւը այդպէս է անում: Հաւերի այդ տեսակ ձգտումը  
բնագդամք է կատարում և ոչ գիտակցօրէն: Եւ այդ  
բնագդամք կատարուող ձգտումը այն միտքն ունի, որ

հաւը իր սերունդի գոյութիւնը աճեցնելով ապահովի: Սե-  
րունդի գոյութիւնը աճեցնելով պահպանումը նկատում  
է համարեայ ամբողջ կենդանեաց թագաւորութեան մէջ:  
Եւ այդ բուռը ձգտումը համարում է բնական, որովհետեւ  
նկատում է ոչ թէ անհատների մէջ, այլ ամբողջ կեն-  
դանիների մէջ:

Եթէ մի տանը, որտեղ հաւեր կան, մի զրադ և սար  
քիչ խաղացող տեղ ընակալ չը կայ զրած, այն ժամանակը  
հաւերը—իւրեանց ձուաները կածեն, ինչ տեղ իրանք իւ-  
րանց համար յարմար կը համարեն. (բնակալ բառը—նշա-  
նակում է՝ բունը բոնել, բունը պահել, ինչպէս զքքակալ—  
գրքեր բոնող, կաթսակալ—կաթսան բոնող (կասկարենք):

Երբ հաւը մի տեղ մի ձու ածեց, նա միւս անգամ  
ձու ածելու համար դարձեալ գնում է և այն մի հատ ա-  
ծած ձուի մօտ նստում և էլի մի նորը ածում և այնպէս  
հաւը շարունակում է ածած ձուաների մօտ նստել և էլի  
նորից ածել:

Եւ երբ այդպէս ածում է մոտ տամնի չափ և կամ  
աւել ձուաներ, ապա նստում է և թուխս է զալիս: Այն  
տանը, որտեղ հաւերի ձու ածելու համար բնակալ է զրած  
լինում,—հաւերը գնում են և ածած ձուի մօտ նստում և  
նոր ձուաներ ածում: Աչքաբաց տանափկինը հէնց որ ձու  
ածող հաւը բնակալից վեր է կենում, իսկոյն գնում է և  
նոր ձու ածած ձուն վերցնում—պահում: Հաւերը այդ  
բանը չեն հասկանում, էլի գնում են և բնակալի մէջ ե-  
զած ձուի վերայ նստում, էլի նոր ձու ածում: Տանափ-  
կինը նորից գնում է և վերցնում և այդպէս շարունա-  
կում է:

Երբ տանափկինը որոշում է մի հաւի թուխս նստաց-  
նել որաշում է, որ այդ թուխսը դնէ Մեծ պատին, որով-  
հետեւ, երբ հաւի ձագուկները ձուից գուրս գան, պէտք է  
որ օդը բաւականին տաք լինի ձագուկների համար,

նոքա չը մրսեն և չը սառչեն։ Զագուկները սկզբներումը շատ են մրսում ու շուտ-շուտ մտնում են թխսի փետըրների տակը, որ տաքանան։ Եւ հէնց որ տաքանում են, դուրս են գալիս թխսի տակից։ Բայց էլի հէնց որ սկսում են մրսել, իսկոյն վազում են թխսի փետըրների մէջ թագ կենում տաքանալու... Երբ տանտիկինը մտադրւում է թուխս դնել ծածկոցի տակ ընտրում է մի խաղաղ անկիւն, որտեղ ոտքը խաղաղ լինի և այդ անկիւնումը դնում է մի արկղ կամ մի փոքր քթոց — մէջ գարման ածած և վըն գարում է ձուաներ, նայերով հաւի մարմին մեծատարածութեանը։ Մեծ հաւը — մեծ տարածութիւն կը բռնի և շատ ձու էլ կը ծածկի իր մարմնով. փոքր մարմին ունեցող հաւը քիչ ձուաների վերայ կարող է ծածել իր մարմին։

Հաւը որ նստում է ձուաների վերայ, իւր մարմին տաքութիւնով և փորի վերայ եղած փետըրներով և աղուամազով, որ հաւի մարմին տաքութիւնը պահպանում են, — տաքայնում է ձուաներին և տաքութիւնից ձագուկները գոյանում են և դուրս են գալիս ձուաներից։

Սովորութիւն է, թխսի տակը դնել կենա թիւ ձուաներ։ Եթէ հաւը փոքր է, դարսում են 11—13 և մինչև անգամ 15 հատ ձուաներ, իսկ եթէ հաւը մեծերից է, դարսում են՝ 15, 17,

19 և մինչև անգամ 21 հատ։

Այն մի հատ կենա ձուի համար ասում են՝ թող այդ



մի հատ կենա ձուն էլ իր թխսի համար լինի։

Հաւը, հէնց որ ձուաների վերայ թուխս նստեց, տանտիկինը — այդ ընի առաջը մի մաքուր ամանով — մաքուր ջուր է, ածում և կուտ շատ տալիս. թէ բնչէ, եթէ թուխսը վեր կենայ, ջուր ուղենայ խմելու, կամ կուտ ուղենայ ուղելու, — իսկոյն պատրաստ լինի, թուխսը շուտով խմի և ուղի ու գնայ շուտով էլ ձուաների վերայ նստի, որպէս զի ձուաները չը սառչեն։ Լաւ թուխսը — երկուօրը մի անգամ է վերկենում տեղից և ջրի ու կուտի համար գուրս գալիս, շուտով ուղառմ — խմում, շուտով էլ յետ գառնում։ Վատ թուխսը, համարեայ ամեն օր է նըստած տեղից վեր կենում՝ ջրի և կուտի համար, երբեմն էլ օրը 2 անգամ... այդպիսով ձուաները սառչում են և ձագուկներ չեն գուրս գալիս։ Եթէ լու թուխս է, նա երբէք իր նստած տեղը և ձուաներին չի աղաստում, իսկ եթէ վատ է աղտոտում է։

Թուխս եկած հաւը նստում է ձուաների վերայ 21 օր և այդ օրից — ինչ ձուի մէջը ձագ է գոյացել նա կը տուցով կուտառում է և միջից ձագուկներ են հանում։

Առաջին երեք օրը տանախիկինը ձագուկներին կերակրում է ամուր եփած ձուով, Այդ ամուր եփած ձուն մանրացնում է և փշրում և առջեր ածում. ձագուկներն էլ ուղառմ են։ Ապա չորրորդ օրից տալիս է ալիւրի փըթրուկ և կամ կորեկ...

Ուշագրութեան արժանի բանն էլ մինը այն է՝ որ թուխսը նստած ժամանակ եղերքի (զրավի) ձուաները իւր թևերով երկու կողմից ժամանակ առ ժամանակ գցում է կենարոնի կողմը. այնպէս որ կենարոնի ձուաները գնում



Են դէպի եզերքը: իսկ եզերքինը դէպէ կենարոն: Միտքն  
այն է, որ տագութիւնը համահաւասար տարածուի բոլոր  
ձուաների վերայ: Այս գործողութիւնն էլ կատարւում և  
ոչ գիտակցաբար:

ԱՐԱՋԱԲԱՆ ԵՒ ՎԵՐՋԱԲԱՆ

Ես այս գրուածքի վերնազըռում զըել եմ, որ գրուածքը նշանակուած է գաստիարակչուհիների և նոցա սանիկների համար:

Գուցէ մտածէք, թէ ինչ որ սահիկներին մատչելի է, և նոյն համար է գրուած, ինչպէս կարող է—մեծերի և այն էլ գաստիարակչուհիներին պիտանացու լինել:

Բանի միտքը այս է:

Դաստիարակչունին ով ուզում է թող լինի, սանիկի  
կրթուած մայրը, հայրը, մեծ եղբայրը, մեծ քոյրը և կամ  
թէ դրական հրաւիրւած մի անձն,—գա պէտք այս զրուած-  
քը կարդայ, ուսումնասիրի և ապա իր սանիկին պատմի  
այնքան, ինչքան ինքը ընդունակ է՝ և համաձայն սանիկի  
մտաւոր կարողութեան, զարդացողութեան և ըմբոնողու-  
թեան, — հասկացնել սանիկին և իւրացնել տալ նորան:

Ես տալիս եմ նիւթը այդ ձևով, ապա մանրամասնութիւնը և պատմելու ձեւ, հարցեր առաջարկելու և սանիկներից պատճամիան սպանալը, թողնում եմ ամեն մի հանգամանքում լրացն գաստիարակչունիներին։ Դոքա կարող են աւելացնել պահապատճենել. այս կամ այն ձևով ուսուցանել. այդ իրանց գործն է. այդ կախուած է իրանց մանկավարժական ընդունակութիւնից։ **Այս նիւթը պէտքը կը գայ սովորացնելու և տներում—մէկին, միւսին սովորացնելու համար, պէտքը կը գայ և ծաղկոցներում և տարրական նախապատճառական գաստանու սովորացնելու։**

Յանկալի է, ստանաւորները սանիկները անգիր սովորեն և մի որևէ եղանակով, տակտով, երգեն, մինչև որ մի ժամանակ զբանց համար երգերի եղանակ կը հնարուի:

Այս տեսակ դասերի նիվթը բաւական թւով ունիմ, միայն երկուով շտապով գրեցի և պատկերները պատրաստել եմ տալիս: Եթէ ինձ յաջողուեց մի տաս հատն էլա գրել, ինձ համար բարոյական մեծ մխիթարութիւն կըլինի, որ սիրած մանուկների մտաւոր զարգացման գործում իմ լումաս գյած կը լինիմ, որը իմ երկար տարիների ուռուցչութեան արգասիքն է:

Մանուկիները սասանաւորները կամաց-կամաց, փոքր առ փոքր չափով պէտք է անզիր սովորեն, դաստիարակ-չունիների օգնութեամբ, ասացի եղողի եղանակով:

Դորա մեծ օգուազը այն է, որ լեզու էլ սովորած կը-  
լինեն, բառերի արագ արտասանելն էլ կը սովորեն. միտքն  
էլ բառերի շուտ ասելովը նոյնպէս աշխոյժ կըստանայ և  
վերջապէս՝ երբ մանուկները կարդալ-դրել էլ սովորեն, ա-  
պա առաջուց իրենց անդիք սովորած ոտանաւորների ու-  
ղիղ զբելը կը սովորեն և զա կը նպաստի լեզուի ուսում-  
նասիրութեանը և ուղիղ գրելուն: Մի խօսքով բազմակող-  
մանի օգուտ ունի երբ մանուկը ոտանաւորները անդիք  
սովորի, միայն երգելով:





અનુભૂતિ કરીને આપણું જીવનની પ્રાણી વિધાની  
સ્વરૂપી બની રહેણી ચાહેરી હોય.

અનુભૂતિ કરીને આપણું જીવનની પ્રાણી વિધાની  
સ્વરૂપી બની રહેણી ચાહેરી હોય.  
અનુભૂતિ કરીને આપણું જીવનની પ્રાણી વિધાની  
સ્વરૂપી બની રહેણી ચાહેરી હોય.  
અનુભૂતિ કરીને આપણું જીવનની પ્રાણી વિધાની  
સ્વરૂપી બની રહેણી ચાહેરી હોય.  
અનુભૂતિ કરીને આપણું જીવનની પ્રાણી વિધાની  
સ્વરૂપી બની રહેણી ચાહેરી હોય.

અનુભૂતિ કરીને

અનુભૂતિ કરીને આપણું જીવનની પ્રાણી વિધાની  
સ્વરૂપી બની રહેણી ચાહેરી હોય.

ԶԱՐԱՐԻԱ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- 1) «Մարդակազմութիւն» 72 պատկերով մասն I 60 կ.
- 2) «Բնագիտութիւն» 57 պատկերով . . . . . 50 կ.
- 3) «Մանկութիւն» մանուկների համար 28 պատկեր 40 կ.
- 4) «Մանկութիւն» գրքի բացատրական ձեռնարկ 10 կ.
- 5) «Զուր» 11 պատկերով . . . . . 35 կ.
- 6) «Վրաստանի միանալը Ռուսաստանի հետ» . . . . . 20 կ.
- 7) «Առաւօտ» 5 պատկերով . . . . . 10 կ.

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

2013

3485

«Ազգային գրադարան



NL0287379

